ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 դեկտեմբերի 2024թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տիրան Խաչատրյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տաթևիկ Պալոյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի 5-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին

1.1 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունն անկողնային պարագների ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով, էլեկտրոնային համակարգի միջոցով՝ 08.11.2024թ.-ին հայտարարել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգ: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 19.11.2024թ-ին ժամը 11:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 20.11.2024թ.-ին ժամը 11:00-ին: Նշված գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնին մասնակցել են թվով 15 մասնակիցներ, այդ թվում՝ «Վինդորան» ՍՊԸ-ն:

1.2 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.11.2024թ.-ին գնման ընթացակարգի N 5 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից է ճանաչել «Վինդորան» ՍՊԸ-ին:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետը ավարտվել է 01.12.2024թ.-ին և անգործության ժամկետի ավարտից հետո՝ չորրորդ աշխատանքային օրը՝ 05.12.2024թ.-ին, «Վինդորան» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցում և կնքվելիք պայմանագրի նախագիծ, որպեսզի Հրավերով սահմանված ժամկետում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, «Վինդորան» ՍՊԸ-ն ներկայացնի որակավորման և պայմանագրի ապահովումները՝ Հրավերի հավելված 4.2 և հավելված 5.1 ձևերին համապատասխան (տուժանքի մասին համաձայնագրի ձևով), ինչպես նաև համակարգում կցի իր կողմից ստորագրված պայմանագիրը: Պայմանագիրը ստորագրելու համար նախատեսված ժամկետը՝ Հրավերով սահմանված 5 աշխատանքային օրն, ավարտվել է 13.12.2024թ.-ին: Հրավերով սահմանված ժամկետում, «Վինդորան» ՍՊԸ-ն չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումներն, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդի համակարգում չի կցել իր կողմից ստորագրված Պայմանագիրը:

1.4 Հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Վինդորան» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն, իսկ «Վինդորան» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ/ ենթակետի համաձայն ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Տ. Խաչատրյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Հ. Հովհաննիսյան**

_____ **Տ. Պալոյան**